ԱՌԿԱՅԾՈՂ ՀՈՒՅՍԻ ԾԻԼԵՐԸ

(Ամենայն Հայոց Հայրապետը Լենինականում և Սպիտակում՝ երկրաշարժի տարելիցին)

«Անդ էր տեսանել» ասում են միջնադարյան պատմիչները, ամեն անգամ, երբ ուզում են զարմանք արտահայտել տեսած ու ապրածի առիթով: «Անդ էր տեսանել» ասում եմ ես, և հավանաբար, յուրաքանչյուր ոք, որ ուղեկցեց Ամենայն Հայոց Հայրապետին 1989 թ. դեկտեմբերի 10-ին դեպի Լենինական և Սպիտակ: Ամենայն Հայոց Հայրապետը իր ավելի քան երեսնամյա գահակալության ընթացքում բազմիցս այցելել է իր հոտի տարբեր հատվածներին աշխարհի չորս ծագերում, բայց համոզված եմ, ոչ մեկ տեղ ժողովուրդը նրան չի ընդունել այդպիսի ջերմեռանդ հավատքով, կենսաբեր հույսի ակնկալիքով, և այո, պշուցյալ հայացքով, որ երբեմն թվում էր, թե աչքերը սառած են ու զուրկ կյանքի խայտից:

Դեռևս Վեհափառը չէր ժամանել, բայց Լենինականի Յոթ Վերք եկեղեցին և շրջափակը տնքում էր հոծ բազմությունից: Պատարագն սկսվել էր, և դրսում գտնվող ժողովուրդը հետևում էր ափվող հոգեպարար երգեցողության ելևէջներին: Եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, և ծովածավալ բազմությունը ալիքավորվեց: Ջանք ու ճիգ էր պետք ուղի բացելու, որ Նորին Սրբությունը մոտենա եկեղեցուն: Բոլորն անխտիր ջանում են մերձենալ Հայոց Հայրապետին, ունենալ նրա Աջը և կամ ստանալ օրհնությունը: Մայրերը ինքնամոռաց տագնապով առաջ էին մղում իրենց զավակներին, ծերունիները Հայոց Կաթողիկոսին արհշատության և քաջառողջության մաղթանքներ էին անում բարձրաձայն. «Ծերք ոստովք ձիթենեօք և տղայք ոստովք արմատենեօք», պիտի նկարագրեր շարականագիրը: Վերջապես ջանադրաբար ու դանդաղ ճեղքելով ձգվող բազմությունը, շքախումբը մուտք գործեց եկեղեցի, ուր ուխտավորները ու մաղթանքները դարձան ավելի լսելի: Վեհափառ Հայրապետը մոտեցավ սուրբ խորանին, ծնրադրեց և տեղ գրավեց առաջնորդական գահի վրա:

Աղետալի երկրաշարժի տասնյակ հազարավոր զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստյան հանդիսավոր պատարագը շարունակվում էր: Նկավ քարոզի պահը: Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին, որ այս տարելիցի ծանր պահին եկել էր կիսելու իր ժողովրդի վիշտը: Սրբազան հայրը ի միջի այլոց ասաց.

«Ձերդ Սրբություն, ծերունազարդ Հայրապետ:

Անցած դեկտեմբերյան աղետը ցնցեց նաև թեմս. հավատացյալ ժողովրդին զարկեց հանկարծ և ուզեց արմատախիլ անել: Փառք Աստծո, այդպես չեղավ: Այդ մեծ հարվածից հետո թվում էր, թե աշխարհը փլվել է մեր գլխին: Սակայն բոլոր բարի կամքի տեր մարդկանց կողքին Ձեր ամբողջ հավատով ներկա էիք Ձեր ժողովրդի մեջ:

Անցնող դեկտեմբերի 11-ին Դուք եկաք Լենինական: Դա սոսկ այցելություն չէր, քանի որ խփված էր նաև Ձեր սիրտն ու հոգին: Ինչպես այսօր, Դուք եկաք Շիրակ, իջնելով Լուսավորչի բարձր գահից՝ հայրաբար քաջալերելու մեզ: Եվ որպես ճակատային, Ձեզ հատուկ արիությամբ ու ոգեղանությամբ, անգամ արցախյան այդքան ծանր ու լարված օրերին, եղաք ուեր հարազատ ցավակիցը: Այցելեցիք նրանց գերեզմաններին: Վկա է Աստված, թե որքան արցունքոտվեցին նաև Ձեր աչքերը, այո, և մենք փրկվածներս ծանոթ Ձեր հայրական և հայրապետական կեցվածքին ու հոգատարությանը, անչափ մխիթարվեցինք ու գոտեպնդվեցինք: Եվ դա դարձավ պատգամ կապված մնալու մեր զոհերի հիշատակին, բնավ չլքելու և չորանալու մեր հայրենիքը, մեր քաղաքը, մեր սուրբ եկեղեցին:

Հայտնի է բոլորին, որ Դուք այդքան մոտիկից հետևում էիք մեր կյանքին: Ձեր օրհնությամբ ջերմացան մեր բոլորի հոգիները, որ չարը մեզ չի մոտենա, փորձությունը մեզ չի սարսափեցնի: Դրա համար էլ չենք տկարանում, մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե: Այո, այսօր Ձեզ այստեղ է բերել տարելիցը մեր անմեղ զոհերի՝ նախագահելու հոգեհանգստյան պաշտոնին, որ քիչ հետո կատարվելու է այս սուրբ խորանի սուաջ: Եվ որպեսզի Ձեզանով թեթևանան մեր վշտերն ու տառապանքները և մեր ընդհանուր աղոթքներով մեր անմեղների հոգիները ընդունելի լինեն Աբրահամի գոգի մեջ: Թույլ տվեք, Վեհափառ Տեր, որ ես, հանուն Շիրակի թեմի, թեմական և եկեղեցական խորհուրդների, մի անգամ ևս Ձեզ վստահեցնեմ, որ մենք, որպես հավատացյալ ժողովուրդ և վշտակիր մարդիկ ոչ միայն չենք հեռանա մեր պաշտելի ավանդներից կամ մեր ընջեցյալների համար տրվելիք պարտքից, այլև պատրաստ ենք նրանց կիսատ մնացած երազներն ու իդեալները ամբողջացնելու, շենացնելու մեր քաղաքներն ու գյուղերը և վերականգնելու խոնարհված եկեղեցիներն ու դպրոցները:

Վեհափառ Տեր, ճիշտ է, որ դեռ մխում են մեր վերքերը, սակայն քանի դեռ Դուք մեզ հետ եք, մեզ հետ են մեր մյուս հայրենակիցներն ու ազգակիցները և ուրիշները Խորհրդային Միության տարբեր վայրերից և արտասահմանից, բոլորն էլ մարդասեր, կարեկից, վիատությունը անծանոթ կմնա մեզ:

Հասել ենք եզերքը գերեզմանի, բայց հավատալով Քրիստոսի Սուրբ Հարությանը և աղոթքներին, չենք մեռել:

Մերը հառնումն է և նոր կյանքը:

Բարի գալուստ Ձեզ, Վեհափառ Տեր, մեր որդիական երախտիքն ու

ները Ձեզ որպես Հայրապետ Հայոց»:

Ապա վերապրած ու վշտակիր ժողովրդին իր հայրապետական պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(10 դեկտեմբեր 1989 թ.)

Կումայրեցի հայեր, վշտահար հարազատներ Մեր,

Հիշո՞ւմ եք դուք այն ցրը, ուղիղ մեկ տարի առաջ էր: Օր չէր այդ, այլ դժոխքի տեսիլք, աշխարհի կործանում, երկնքի փլուզում և հետո՝ մահվան ուրվական, դիակներ, դիակներ, դագաղներ, գերեզմաններ, սուգ ու շիվան անվերջ, մայրեր խենթացած, ողջ-ողջ մարմիններ թաղված ավերակների տակ, ժպիտներ սառած, հոգիներ մեռած, հույսի աստղերը բոլոր հանգած, կյանքի ճրագը խավարում կորած ...

Ո՞վ, ո՞վ պիտի պատկերի դժոխքը այդ օրվա, ո՞վ պիտի չափի վիհը ձեր վշտի, անվերջ սարսափի, արյուն արցունքի ...

Եվ հետո մի ամբողջ տարի, անհասնում օրեր, ողբ ու արտասուք, զրկանք, տառապանք, անվերջ հառաչանք ...

Սիրելիներ, ինչպես մեկ տարի առաջ, այն դժոխք օրերին, այսօր էլ ես եկել եմ ձեզ մոտ վերստին, ձեզ հետ ողբալու ձեր ճակատագիրը դաժան, ողբալու ձեր մեռելներին, ձեր երեխաներին և աղոթելու նրանց հոգիների համար:

Այն օրը, Գեկտեմբերի 11-ին, ես Ս. Էջմիածնից եկել էի ձեզ վշտակցելու, ձեզ մխիթարելու, բայց զգացել էի իմ անզորությունը, իմ հուսահատությունը: Հոգուս մեջ աղաղակում էի սաղմոսերգուի նման՝ «Փրկիր մեզ, Տեր Աստված, ջրերը հասնում են մեր վզին, ընկղմում ենք դեպի խորքը անդնդի և տեղ չունենք ոտք դնելու: Ջրի հոսանքները տանում են մեզ, և հեղեղները անցնում են մեր գլխի վրայով: Մեր ուժերը սպառվել են աղաղակելուց, մեր կոկորդը այրվում է կրակի մեջ, մեր աչքերը հանգում են օգնություն սպասելուց՝ Աստված» (Սաղմ. ԿԸ 2—4):

Այսօր եկեք ծունկ չոքենք բոլորս՝ զոհվածների հիշատակի առաջ և ուխտենք երբեք չմոռանալ նրանց, ուխտենք սուրբ պահել նրանց անունները, ուխտենք ապրել նրանց երազանքներով: Ուխտենք արժանի դառնալ նրանց զոհաբերումին՝ մեր կյանքի գործերով, մեր հայրենաշեն աշխատանքով ու մխիթարվենք նորածին երեխաներով: Գիտեմ, անարկու երկրաշարժից հետո ձեր կյանքը ծանրորեն տառապալից եղավ, նույնիսկ հուսահատական, օրեր և օրեր շարունակ: Ճշմարիտ է, որ օգնություններ տեղացին ամեն կողմից, թե մեր պետության լայն միջոցառումներով, թե արտասահմանյան երկրներից առատաձեռն նվիրաբերումներով, թե սփյուռքի հայության եղբայրական օգնություններով, սակայն տեսնում եմ, որ դեռևս ծով կարիքների մեջ եք գտնվում, և շատերը դեռևս անտուն եք, ծանր նեղության մեջ:

Մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը երկրաշարժի առաջին օրերից սկսյալ ջանաց իր օգնության ձեռքը երկարել՝ աղետյալներին բաժանելով արտասահմանից ստացված դեղորայք, սննդամթերք ու հագուստեղեն, նաև հոգեկան մխիթարություն բաշխելով ձեզ բոլորիդ:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՅՈԹ ՎԵՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԵՄԻՑ ՔԱՐՈԶ Է ԽՈՍՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

(10 դեկտեմբերի 1989 թ.)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՂԵՏՑԱԼ ԺՈՂՈՎՐԴՈՎ

(10 դեկտեմբերի 1989 թ.)

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՅՈԹ ՎԵՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՐՋԱՓԱԿԸ

(10 դեկտեմբերի 1989 թ.)

ՆՈՐԱԲԱՑ ԽԱՉՔԱՐԻ ԱՌՋԵՎ
(Լենինական, 10 դեկտեմբերի 1989 թ.)

Հետ այսու էլ, մեր Եկեղեցին ու մեր հոգևորականները պիտի շարունակեն իրենց պարտականությունը կատարել:

Ի մխիթարություն ձեզ, կամենում եմ ավետել, որ Սուրբ Էջմիածինը պիտի չմոռանա նաև վերաշինությունը և բարեկարգումը ձեր աղոթքի Տների: Ահա արդեն իսկ վերջանալու մոտ է վերաշինությունը ձեր այս տաճարի՝ Լենինական քաղաքի Յոթվերք Աստվածամոր Մայր եկեղեցու, որի կամարների տակ աղոթում ենք մենք այժմ: Պիտի վերանորոգվեն նաև Ստեփանավանի ու Կիրովականի եկեղեցիները, որոնք բարեբախտաբար կանգուն վիճակում են: Ապագային պիտի վերակառուցենք ձեր քաղաքի խոնարհված Ս. Ամենափրկիչ եկեղեցին, նաև ծրագրել ենք կառուցել նոր մի հուշարձան-եկեղեցի Սպիտակում, հավերժացնելու համար հիշատակը բոլոր աղետյալ քաղաքների ու գյուղերի զոհվածների: Առաջիկա տարիներին հույս ունենք, որ կյանքի կկոչվեն այս եկեղեցաշինական ծրագրերը:

Սիրելի հավատացյալներ, ես հստակ հիշում եմ իմ այցելությունը Լենինական, երկրաշարժից չորս օր հետո, կիրակի օր էր: Ինչ ահավոր վիճակ էր այստեղ, կործանված շենքեր, փլված տներ անհամար, ամեն տեղ ավերակ, ամեն քայլափոխին լաց ու կոծ, և դագաղներ, դագաղներ, նաև հոգիների ավելակ ու կործանում:

Հիշում եմ ձեր դեմքերը, արտասուքից սառած ձեր հայացքները: Հիշում եմ ձեր հուսահատ աղերսները, թե՝ «Վեհափառ, ի՞նչ պիտի լինի մեր վիճակը»: Հիշում եմ նաև Ամենափրկիչ եկեղեցու ավերակների վրա իմ հանդիպումը ձեզ հետ: Հիշում եմ, այդ պահին, հեռվից մի երիտասարդի ձայնը, թե՝ «Բայց, Վեհափառ, չմոռանանք նաև մեր Ղարաբաղը»: Ես այդ ձայնը չեմ մոռացել ու չեմ էլ մոռանալու: Դա արդարության ձայնն էր, մեր պատմության ձայնն էր, մեր ապագայի կանչն էր:

Սիրելի կումայրեցիներ, ձեր զոհյալների գերեզմանների առաջ, ձեր աղոթքից հետո, վասն նրանց հոգիների հանգստյան, ոտքի կանգնեք և ձեր անմար վիշտը ծրարած ձեր սրտերում, դիմեցեք դեպի կյանք, դեպի աշխատանք, դեպի լույս առավոտ, անկոտրում հավատքով և լավատեսությամբ դեպի մեր ազգի ապագան, դեպի ձեր կործանված հայրենի աշխարհի նոր ապագան:

Մի վախեցեք, մի տկարացեք, մի երկմտեք, քայլեցեք առաջ՝ ձեռք-ձեռքի տված բոլորդ միասին, բոլորդ միասիրտ, բոլորդ միակամ: Ձեր մեջ թող չլինեն բաժանումներ, չլինեն անհամերաշխություններ: Լավ է, որ ապրեք ու աշխատեք իբրև հարազատ ցավակից եղբայրներ, իբրև գործակիցներ, մեկդ մյուսիդ պաշտպան, մեկդ մյուսիդ օգնական, իբրև ազնիվ քաղաքացիները մեր մայր հայրենիքի:

Ձեզ սպասում է ևս մի ձմեռ, բայց մի վհատվեք, որովհետև շուտով նորից կբացվի գարունը պայծառ, նորից կկանաչեն ձեր դաշտերն ու լեռները, նորից կհնչեն երգերն աշխույժ ձեր երեխաների:

Եվ ես միշտ աղոթելու եմ ձեզ համար, աղետյալ քաղաքների ու գյուղերի բոլոր վիրավոր զավակների համար:

«Տեր Աստված, արթնացրու քո զորությունը և եկ փրկելու մեզ: Աստված զորությանց, վերականգնիր մեզ, երևեցրու մեզ քո երեսը և փրկիր մեզ» (Սաղմ. ՀԹ 8—5): Ամեն:

Ձեզ բոլորիդ իմ հայրական սերը, իմ սրտից բխած բարի մաղթանքները և իմ հայրապետական օրհնությունը:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի խոսքը ընդմիջվում է հավատացյալների զանազան բացականչություններով՝ «ամեն» և այլ բառեր: Ապա Հայոց Հայրապետը եկեղեցական դասի և հոծ բազմության ուղեկցությամբ այցելեց ու Իր Հայրապետական օրհնությունը բաշխեց հավաքված ժողովրդին, մխիթարական խոսքեր ասաց զոհերի հիշատակին կանգնեցված Արագած փողոցի հուշահամալիրի հուշաքարի, «Գթություն» ընկերության Լենինականի Հասանաձյուղի նախաձեռնող խմբի կողմից տեղադրված խաչքարի, մանկական այգու հուշարձանի տարածքում:

Այդ այցելություններից մեկի ջերմ արձագանքը կա Մուսայելյան գյուղի բնակիչների կողմից ուղղված նամակում.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, ծերունազարդ Հայրապետ,

Աննկարագրելի է այն զգացումը, որը մենք ապրեցինք դեկտեմբերի 10-ին մեր գյուղի հասարակայնությանը շնորհած Ձեր այցով: Մեր ժողովրդին հասած մեծ աղետի տարելիցին Դուք այցելեցիք Ծիրակի ոստան և հատկապես մեր գյուղ՝ անմիջականորեն դիտելու երկրաշարժի բյուրավոր զոհերի հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանը, որը մեծ նվիրումով իրագործել է մեր ուսուցիչ, համագյուղացի Ռաշիդ Առաքելյանը: Մենք համարում ենք, որ Ձեր այցը մեզ համար ունի այն արժեքը, որպես թե Դուք կովի թեժ պահին մեզ զորավիգ և սատար եք կանգնել:

Այժմ, երբ մեր ժողովուրդը գտնվում է իր վերածննդի՝ բազում դժվարությունների և անարդարորեն մեզ հասցրած դառնությունների հաղթահարման ճանապարհին, երբ այժմ մեզ, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է միասնություն և ճշմարիտ հավատի պահպանություն, Ձեր ճշմարիտ և սրբագույն խոսքը մեզ հուսադրում, տրամադրում և ոգեշնչում է: Մեր գյուղի համար պատմական մեծ նշանակություն ունեցող Ձեր գալուստը մենք համարում ենք մեր երդման վկայությունը՝ գալիք պայծառ ապագայի համար սպասվելիք բազում հայտնի և ոչ հայտնի փորձություններին դիմանալու և հաղթահարելու գործում:

Վեհափառ Տեր, Ձեր բարի մաղթանքները ընդունեցինք մեր ոգու խորքում և, որպես ոգեշնչություն, մենք այն կհասցնենք մեր սերունդներին ու հավատարին կմնանք մեր ժողովրդին, մեր հավատքին, մեր էությանը, կմնանք անդավաճան մեր երդմանը:

Հայրապետ Հայոց, մենք բոլորս գտնվում ենք անմխիթարելի վշտի մեջ մեր հարազատների ողբերգական մահերի պատճառով, սակայն մենք մխիթարվում ենք մեր հավատով ու ցնծություն ենք ապրում Ձեր այցից: Այս հոգեվիճակը կձգտենք պահել մեր մեջ, որպես ազգային ոգու ուժ:

Մեր ազգին Ձեր նվիրվածության օրինակը մենք կօգտագործենք մեր հարազանքի ճանապարհին, պատրաստ գործելու ամեն մի պարագայում:

Առողջություն Ձեզ:

ԱԽՈՒՐՅԱՆԻ ԾՐՋԱՆԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳՅՈՒՂԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

11 դեկտեմբերի 1989 թ.

Հետո Ամենայն Հայոց Հայրապետի շքախմբի մեքենաների շարասյունը, հաղթահարելով Ջաչուռի լեռնանցքի բուք ու բորանը, հասավ երկրաշարժի կիզակետ՝ Սպիտակ քաղաք: Բոլորին սպասում էր հաճելի անակնկալ. Սպիտակի գերեզմանոցում հազարավոր ննջեցյալների հոգու փրկության համար վեր է խոյանում գեղեցիկ մատուռը, որպես ժամանակավոր աղոթատուն, մինչև Սպիտակի հուշարձան-եկեղեցու կառուցումը: Շրջափակն ու եկեղեցին լեցուն էր հավատացյալ բազմությամբ: Պատարագը երգում էին ոչ մասնագետ երգիչներ՝ հավատացյալներ, որոնք Նարեկ քահանա Մատարյանի ջանասեր աշխատանքով կարճ ժամանակում սովորել էին Եկմալյանի պատարագի երգեցողությունը, նրանց մեղմ ու անկեղծ աղերսը առ Աստված ավելի խոհական էր դարձնում հոգևոր մթնոլորտը: Վեհափառ Հայրապետը այստեղ արտասանեց երբևէ խոսած իր մեծահուզիչ քարոզներից մեկը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍՊԻՏԱԿԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՌՈՒՄ
(10 դեկտեմբերի 1989 թ.)

«Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»:

Սիրելի սգակիր ժողովուրդ,

Անհավասիկ ես կրկին եկել եմ ձեզ մոտ Ս. Էջմիածնից ահեղ երկրաշարժի տարելիցի առիթով, մի երկրաշարժ, որ բազում քաղաքներ, գյուղեր կործանեց և բազմահազար անմեղ հոգիներ խլեց ձեզանից, հայոց աշխարհից: Մի տարի առաջ, հիշում եք երեի, փետրվարին էր, ես եկա այստեղ, որպեսզի այն ատեն ձեզ բերեմ իմ աղոթքը, իմ օրհնությունը և իմ մխիթարության խոսքը: Շատ հուսահատիչ էր ձեր վիճակը: Ես ինքս էլ շփոթված էի, թե ինչպես կարող եմ ձեզ մխիթարել, երբ ինքս կարոտ էի մխիթարվելու:

Այս անգամ գալիս եմ մի տարի հետո, երբ ձեր կացությունը մի քիչ բարվոքված է. բայց վստահ եմ՝ տակավին բազում դժվարությունների և զրկանքների ներքև եք ապրում, և վշտահար սրտով ողբում եք ձեր զոհյալ հարազատներին՝ ձեր զավակներին, ձեր թոռներին, ձեր եղբայրներին ու քույրերին: Զգում եմ, որ ծանր է ձեր կացությունը: Դրա համար իմ խոսքը սկսեցի սուրբ Ավետարանի բառերով՝ «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»: Հիսուսի խոսքերն են արտասանված «Լեռան քարոզ»-ի ընթացքում երկու հազար տարիներ առաջ: Հիսուսի այս խոսքը հնչում է դարեր շարունակ, նաև մեր ազգին ուղղված մի պատգամ, որ սգավորները պիտի մխիթարություն գտնեն: Հիսուս ներշնչում է մեզ այն հավատքը, որ ննջեցյալները կորած չեն, նրանց հոգիները ապրելու են հավիտենական կյանքում, խաղաղության և հավերժության աշխարհում: Այդ հավատքով, եկել եմ ձեզ իմ մխիթարական խոսքը ասելու: Դուք, սգակիր և վիրավոր ժողովուրդ, պիտի մխիթարվեք, Աստուծո խոստումն է այդ, մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոստումն է այդ, որին մենք հավատում ենք:

Գիտեմ, թե տարվա ընթացքում և մինչև վերջերս դուք զբաղված էիք ձեր գերեզմանները բարեկարգելով, և շիրիմներ կառուցելով, որպեսզի զոհվածները չմոռացվեն: Լավ եք արել, սա հայկական հին ավանդական

սովորություն է: Գերեզմանների վրա մենք խաչքար ենք դնում: Խաչքարը խորհրդանշում է ոչ միայն գերեզմանը, այլ նաև հավերժի գաղափարը ու նաև վերածնունդը, որովհետև Հիսուս իր մահով մահը խորտակեց՝ «Մահուանամբ զմահ կոխեաց» և իր հարությամբ մեզ կյանք պարգևեց:

Ահա այդ հավատքով գալիս եմ ես ձեզ մոտ, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ բերելու Մեր օրհնությունը ձեր զոհյալների հիշատակին, Մեր օրհնությունը նրանց գերեզմաններին, խաչքարերին: Մեր օրհնությունը նաև ձեզ բոլորիդ՝ ձեր ընտանիքներին, ձեր կյանքին և ձեր ապագային:

Մենք հանդգնված ենք, որ նոր կյանքի առավոտ կբացվի Աստուծո ողորմությամբ, նաև օգնությամբը շինարարական աշխատանքների, որոնք այն չափով ծավալվում են ամբողջ աղետի շրջանում թե՛ մեր հայրենի իշխանությանց, թե՛ արտասահմանյան կազմակերպությունների օժանդակություններով, նաև Սփյուռքի ձեր հայ եղբայրների և քույրերի օգնություններով: Լավ գիտեմ, որ այդ բոլորը տակավին բավարար չեն՝ ձեր ծով կարիքները հոգալու, բայց այդ օգնությունները պիտի շարունակվեն:

Այս վերջին տասը օրերի ընթացքում ես տևապես հաղորդակցության մեջ էի արտասահմանի մեր եկեղեցական կենտրոնների հետ, մեր հոգևոր եղբայրների հետ և պարտիմ ձեզ փոխանցել նրանց վշտակցությունը և սիրաբարության խոսքը: Ամբողջ աշխարհը վշտակից է ձեզ, սիրելի սպիտակցիներ: Ամբողջ աշխարհը ցնցվեց այդ ահեղ երկրաշարժից, և կարեկցության, մարդասիրության հզոր մի աղիք բարձրացավ դեպի մեր մայր երկիրը, դեպի Խորհրդային Հայաստան: Այս աղոթքի պահին, թեև իմ սիրտը վշտով լեցուն՝ ինչպես ձեր սրտերը, բայց նաև որոշ չափով մխիթարված եմ, որ այսքան մեծ թվով հավաքված եք այս նորաշեն ձեր աղոթքի տանը մեջ, որ մի քանի շաբաթների ընթացքում դուք կարողացել եք կառուցել ձեր հավատքի զորությամբ: Հայր Ստեփանոսը, որ հաճախ Էջմիածնից գալիս է իբրև իմ ներկայացուցիչը, ինձ հաղորդել էր այդ մասին, բայց չէի պատկերացնում, որ այսքան գեղեցիկ, այսքան վայելուչ աղոթքի տուն է կառուցվել այդքան կարճ ժամանակի ընթացքում: Այդ էլ ես մտածում եմ, Աստուծո օրհնությունն է, և ձեր շնորհքը և ձեր հավատքի և հույսի հավաստին:

Այս արծաթափայլ մատուռը իսկապես խորհրդանշում է ձեր կրոնական հավատը, որ անսասան պետք է մնա իբրև հայ քրիստոնյա ժողովրդին հարազատ ապրում: Եվ լավ է, որ այս մատուռը կոչել եք Սուրբ Հարության մատուռ, խորհրդանշանն է այդ անվանումը: Ես հույս ունեմ, որ սոտ ապագայում, Սպիտակում ձեր քաղաքային իշխանությունների կարգադրություններով և նյութական, բարոյական և շինարարական մեր օժանդակություններով մենք կկարողանանք այստեղ բարձրացնել մի հոյակերտ հուշարձան-եկեղեցի, ամբողջ աղետյալ շրջանի զոհյալների հիշատակին: Ես երազում եմ այն օրը, երբ պիտի տեսնեմ այդ նորակառույց եկեղեցին երևի մի քանի տարիներ հետո: Կխորհեմ, թե Աստված ինձ այդ մի քանի տարիները կշնորհի, որպեսզի անձամբ կարողանամ գալ ձեզ մոտ և օծումն ու բացումը կատարել նորակառույց հուշարձան-եկեղեցուն: Եվ ցանկանում եմ, որ այդ կառուցվելիք հուշարձան-եկեղեցին լինի ուշադրության կենտրոնը ոչ միայն Հայաստանի հայության, այլև համայն աշխարհի հայության, և ավելին տակավին, լինի ուշադրության կենտրոնը մեր բոլոր քույր Եկեղեցիների, թե՛ Խորհրդային Միությունից, թե՛ արտասահմանից, որոնք վեր-

ջին տարվա ընթացքին բազում ձևերով օգնություններ փութացին մեր աղետյալ զավակներին: Նրանք էլ սպասում են, որ այդպիսի մի հուշարձան-եկեղեցի կառուցվի Սպիտակում, որով ձեր քաղաքը պիտի լինի մի միջազգային ուխտատեղի: Եվ վստահ եղեք, թե հետագա տարիներին պատվիրակություններ ուխտի պիտի գան արտասահմանից թե՛ հայկական գաղութներից, թե՛ քույր Եկեղեցիների կազմակերպություններից: Այս երազանքը ունեմ ես, և ձեզ հայտնում եմ այդ մասին ի մխիթարություն ձեր հոգիների:

Բոլորս միշտ տևապես պիտի աղոթենք ձեր զոհյալների համար: Ես պիտի աղոթեմ նաև ձեր կյանքի համար, ձեր քաջառողջության, ձեր արևշատության համար, ձեր զավակների համար, և ձեր ա՛յն զավակների համար, որոնք պետք է ծնվեն ու լույս աշխարհ գան: Թող հետ այսու այլևս Սպիտակը ոչ մեկ վիշտ և ցավ չտեսնի, թող միշտ շեն մնա և ծաղկյալ, և ամեն հարկի տակ թող լինի միշտ հարսանիք և մկրտություն և օրհնությունը Աստուծո:

Սիրելի ժողովուրդ, հայ ազգը աշխարհի ամենահին և ամենաօժտված ազգերից մեկն է: Ճիշտ է, մեր հայրենիքը այսօր իր աշխարհագրական տարածքով փոքր է, այսօրվա Խորհրդային Հայաստանը իր սահմաններով հազիվ մեկ ութերորդ մասն է բուն Հայաստանի, պատմական Մայր Հայաստանի: Բայց ոչինչ, մենք այստեղ պիտի ապրենք, պիտի աճենք, պիտի զարգանանք, պիտի ծաղկենք, ցույց տաղու աշխարհին, որ հայ ազգը մահանալու ազգ չէ՛, հայ ազգը կենդանի՛ ազգ է, հայ ազգը շինարա՛ր ազգ է, հայ ազգը ստեղծարա՛ր ազգ է: Աստուծո ստեղծարար ոգին բաշխված է մեր ժողովուրդին երեք ու ավելի հազար տարիներից ի վեր:

Մենք քրիստոնյա վավերական մի ժողովուրդ ենք, սիրելիներ. մեր քրիստոնեությունը կմարմնավորվի մեր Եկեղեցիով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիով: Հայ ժողովուրդը մեկ կրոնական հավատք ունի՝ քրիստոնեական հավատք, և միայն մեկ Մայր Եկեղեցի, մեկ ազգային Եկեղեցի, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին է, այժմ և միշտ, որին պատկանում են մեր ժողովուրդի բոլոր զավակները անխտիր: Այս հավատքով, այս մխիթարությամբ և այս երազանքներով ես կուզենայի կրկին անգամ Ս. Էջմիածնից ձեզ բաշխել Աստուծո օգնությունը. «Ողջ լերուք, զօրացեալք Սուրբ Հոգւով, յաւերժ օրհնեալք ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

Ուշ երեկոյան Հայոց Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ հավատալով, որ հույսի առկայծող ծիլերը անպայման կաճեն ու կմեծանան, և մեր ցավատանջ ժողովուրդը ճանապարհ կգտնի դեպի իր հուսալի գալիքը:

ԹՂԹԱԿԻՑ